Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն



Մոխրագույն թևերով դեղձանիկներ

Մոտ 60 տարի առաջ, երբ ես երիտասարդ եպիսկոպոս էի, իմ ծխի տարեց այրի Քեթլին Մակքին մահացավ: Նրա իրերի թվում կային երեք դեղձանիկներ: Երկուսը կատարյալ դեղին էին, և պետք է հանձնվեին նրա ընկերուհիներին: Երրորդը, Բիլին, դեղին էր, թևերի վրա մոխրագույն պուտերով: Քույր Մակքին ինձ մի գրություն էր թողել. «Կարո՞ղ եք հյուրընկալել նրան ձեր տանը: Նա ամենագեղեցիկը չէ, սակայն ամենալավն է երգում»:

Քույր Մակքին շատ նման էր իր մոխրագույն թևերով դեղձանիկին: Նա օրհնված չէր գեղեցկությամբ, օժտված չէր կեցվածքով կամ ժառանգներով: Սակայն նրա երգը օգնում էր մյուսներին ավելի հոժարակամ կրել իրենց բեռը և ավելի հեշտ լուծել իրենց խնդիրները:

Աշխարհը լի է մոխրագույն թևերով դեղձանիկներով: Ափսոս, որ շատ քչերն են սովորել երգել: Ոմանք երիտասարդ են և չգիտեն, ով են իրենք, ինչ կարող են լինել կամ, անգամ, ինչ են ցանկանում լինել, սակայն նրանք բոլորն էլ ցանկանում են ինչ-որ մեկը լինել: Ոմանք էլ տարիքից կքված, հոգսերով ծանրաբեռնված կամ կասկածներով լի են, ապրելով իրենց կարողություններից շատ ավելի ցածր մակարդակով:

Լավ ապրելու համար պետք է ունակություն զարգացնենք, որպեսզի քաջությամբ դիմակայենք նեղությանը, ուրախությամբ՝ հիասթափությանը և խոնարհությամբ ընդունենք հաղթանակը: Կհարցնեք. «Ինչպե՞ս կարող ենք հասնել այդ ամենին»: Կպատասխանեմ. «Ճիշտ պատկերացում կազմելով, թե իրականում ով ենք մենք»: Մենք կենդանի Աստծո որդիներն ու դուստրերն ենք, որ նրա պատկերով ենք ստեղծվել: Մտածեք այդ մասին. *Աստծո պատկերով ենք ստեղծվել:* Մենք չենք կարող անկեղծորեն հավատալ դրան, եթե չապրենք ուժի ու զորության մի նոր խորը զգացում:

Մեր այս աշխարհում, հաճախ բարոյականությունը կարծես թե երկրորդական տեղ է մղվել գեղեցկությունից և հմայքից հետո: Սակայն արձագանքում է շատ վաղուց Տիրոջ կողմից Սամուելին տրված խորհուրդը. «Այն չէ բանը, որ տեսնում է

մարդը. որովհետև մարդը տեսնում է աչքի առաջինը, բայց Տերը սրտին է նայում» (Ա Թագավորաց ԺԶ.7):

Երբ Փրկիչը հավատքով մարդ էր փնտրում, Նա չընտրեց ժողովորաններում հաճախ հանդիպող ինքն իրեն արդար համարող մեկին: Այլ Նա կանչեց նրան Կափառնայումի ձկնորսների միջից: Կասկածներով լի, անզգաստ, պոռթկուն Սիմոնը դարձավ Պետրոս՝ հավատքի Առաքյալ: Մոխրագույն թևերով դեղձանիկն արժանացավ Վարդապետի լիակատար վստահությանը և մշտական սիրուն:

Երբ Փրկիչը ընտրում էր ջերմեռանդ ու զորավոր միսիոներ, Նա գտավ նրան ոչ թե Իր պաշտպաններին, այլ Իր հակառակորդների մեջ: Հալածող Սավուղը դարձավ քարոզիչ Պողոս:

Քավիչն ընտրեց անկատար մարդկանց, որ ուսուցանեն կատարելության ուղին: Նա այդպես է վարվել այն ժամանակ: Նա այդպես է վարվում այժմ, այսինքն՝ ընտրելով մոխրագույն թևերով դեղձանիկներին: Նա կանչում է ձեզ և ինձ, որպեսզի ծառայենք Իրեն այստեղ՝ ներքևում: Մենք պետք է լիովին կատարենք մեր պարտավորությունը: Իսկ մեր մաքառումներում սայթաքելիս եկեք խնդրենք. «Առաջնորդիր մեզ, Ո՜վ մարդկանց մեծ Արարիչ, որպեսզի կրկին դուրս գանք խավարից»:[1]

Իմ աղոթքն է, որ մենք հետևենք Գալիլեացի Մարդու օրինակին, որին կարող ենք գտնել աղքատների մեջ՝ տրորված, հարստահարված, ճնշված ու չարչարված: Դա անելիս թող որ ճշմարիտ երգ բխի մեր սրտերից:

Հղումներ

1. “Fight Song,” Yonkers High School.

Ուսուցանում այս ուղերձից

Ուսուցանելիս . . . օգտակար է, երբ ուսանողները դիտում կամ ունկնդրում են ինչ-որ հատուկ բան» (*Teaching, No Greater Call* [1999], 55): Որպեսզի օգնեք ընտանիքի անդամներին հասկանալ Նախագահ Մոնսոնի ուղերձը, այս ուղերձը միասին ընթերցելուց հետո, կարող եք խնդրել նրանց պատրաստվել կիսվել իրենց սովորածով: Յուրաքանչյուրին խնդրեք կիսվել, թե իրենց կարծիքով որն է հոդվածի կարևոր կետը: Ավարտեք Նախագահ Մոնսոնի ուղերձի մասին վկայություն բերելով:

Մարգարեների միջոցով տրված Աստծո խոսքն ուսուցանելը կարող է զորեղ ազդեցություն գործել նրանց կյանքում, ում մենք ուսուցանում ենք (տես *Teaching, No Greater Call,* 50): Նախագահ Մոնսոնը սահմանում է՝ ուժ ու զորություն կա այն գիտելիքի մեջ, որ մենք Աստծո զավակներն ենք: Հոդվածը կարդալուց հետո խնդրեք ընտանիքին կիսվել, թե ինչն է օգնում իրենց հիշել իրենց ով լինելը:

Երիտասարդներ

Ո՞րն է իրական գեղեցկությունը

Նախագահ Մոնսոնն ասել է այս ուղերձում. «Մեր այս աշխարհում, հաճախ բարոյականությունը կարծես թե երկրորդական տեղ է մղվել գեղեցկությունից և հմայքից հետո: Երիտասարդ կանայք հնարավոր է պայքարում են իրենց կերպարի համար, թե ով են իրենք և ինչ կարող են դառնալ: Ձեզ կօգնեն իսկական գեղեցկության մասին Յոթանասունական Երեց Լին Գ. Ռոբինսի այս խոսքերը.

- Երիտասարդ կինը, որի դեմքը փայլում է երջանկությունից և առաքինությամբ, ներքին գեղեցկություն է ճառագում:
- Առաքինի ժպիտը իսկապես գեղեցիկ է, երբ այն բնականորեն է ճառագում: Այդ իրական գեղեցկությունը հնարավոր չէ շպարով ստեղծել, այն Հոգու պարգև է:
- Համեստությունը արտաքուստ երևացող և ներքին գեղեցկության համար պարտադիր հատկանիշ է:
- Եթե դուք հուսահատված եք ձեր արտաքինով, ձեզ նայեք ձեզ սիրող մարդկանց աչքերով: Թաքնված գեղեցկությունը, որ տեսնում են սիրելի մարդիկ, կարող է հայելի դառնալ ինքնագնահատման համար:
- Տղամարդը, որ ցանկանում է առաքինի կնոջ հետ ամուսնանալ, «բնական մարդու» աչքերով չի նայում նրան (տես Ա Թագավորաց ԺԶ.7): Նրան գրավում է կնոջ մաքուր և ուրախ սրտից ճառագող իրական գեղեցկությունը: Նույնը վերաբերում է երիտասարդ կանանց, ովքեր առաքինի երիտասարդ տղամարդ են փնտրում:
- Մեր Երկնային Հայրը ակնկալում է Իր բոլոր զավակներից, որ նրանք ճիշտը կընտրեն, որը հարատև երջանկության և ներքին գեղեցկության տանող միակ ուղին է:

- Տիրոջով ոչ մի մրցակցություն չկա: Բոլորը ունեն Նրա պատկերը իրենց դեմքի վրա դրոշմելու հավասար արտոնություն (տես Ալմա 5.19): Դրանից առավել գեղեցկություն գոյություն չունի:

Լրիվ ուղերձը կարդալու համար, տես Lynn G. Robbins, "True Beauty," *New Era,* Nov. 2008, 30: Երիտասարդ տղամարդիկ կարող են նման խորհուրդ ստանալ, կարդալով Errol S. Phippen, "Ugly Duckling or Majestic Swan? It's Up to You," *Liahona,* Oct. 2009, 36:

Երեխաներ

Երգեք ձեր ամենաքաղցր երգը

Նախագահ Մոնսոնը պատմում է Քույր Մակքիի երեք դեղձանիկների մասին: Երկուսը ամբողջովին դեղին էին: Նրանք կատարյալ տեսք ունեին: Երրորդը կատարյալ տեսք չուներ, որովհետև թևերին մոխրագույն պուտեր ուներ: Սակայն Քույր Մակքին սիրում էր նրան, որովհետև նա շատ քաղցր էր երգում:

Ոմանք մտածում են, թե իրենք այդքան գեղեցիկ կամ խելացի չեն, որքան մյուսները: Սակայն յուրաքանչյուրն էլ թանկ է Տիրոջ համար: Մենք կարող ենք հավատարիմ ու համարձակ լինել և, մեր տաղանդներն օգտագործելով, ծառայել մյուսներին: Այդ ժամանակ մենք նմանվում ենք մոխրագույն թևերով դեղձանիկներին: Կատարյալ չլինելով հանդերձ մենք երգում ենք մեր ամենաքաղցր երգը:

Գրեք երեք ուղի, թե ինչպես կարող ենք մեր ամենաքաղցր երգը երգել Տիրոջ համար:

Ես կարող եմ իմ ամենաքաղցր երգը երգել Տիրոջ համար.

1. _____
2. _____
3. _____

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA: Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *First Presidency Message, June 2010*-ի թարգմանությունը: Armenian: 09366 201

Հաղորդությամբ նորոգենք ուխտերը

Ուսուցանեք այս սուրբ գրություններն ու մեջբերումները կամ, անհրաժեշտության դեպքում, մեկ այլ սկզբունք, որը կօրհնի այն քույրերին, որոնց դուք այցելում եք: Վկայություն բերեք վարդապետության մասին: Նրանց, ում այցելում եք, հրավիրեք կիսվել իրենց զգացմունքներով և սովորածով:

Հիսուս Քրիստոսը հաստատեց հաղորդությունը

«Հիսուսը հացն առավ և օրհնելով կտրեց, և աշակերտներին տուավ և ասեց. ‹Առե՛ք, կերեք› (Մատթ. ԻԶ.26): ‹Այս է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. այս արեք իմ հիշատակի համար› (Ղուկաս ԻԲ.19): Նույնկերպ նա վերցրեց գինու բաժակը, որը սովորաբար նոսրացվում էր ջրով, և գոհաբանության օրհնություն ասելով փոխանցեց այն իր հետ հավաքվածներին, ասելով. «Այս բաժակը նոր ուխտն է իմ արյունովը, որ թափվում է . . . ի թողություն մեղաց: Այս արեք իմ հիշատակի համար» . . .

Գեթսեմանի և Գողգոթայի նախօրեին վերնատանը տեղի ունեցած այս իրադարձությունից հետո խոստումի զավակները գտնվում են ուխտի ներքո՝ հիշելու Քրիստոսի զոհաբերությունը այս ավելի նոր, բարձր, ավելի սուրբ և անձնական ձևով»:[1]

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ:

Հաղորդությամբ մենք նորոգում ենք մեր մկրտության ուխտերը

«Մկրտվելիս մենք մեզ վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի սուրբ անունը: Նրա անունը մեզ վրա վերցնելը մեր կյանքի ամենանշանակալից փորձառություններից մեկն է: . . .

Ամեն շաբաթ հաղորդության ժողովին մեր մկրտության ուխտը նորոգելիս մենք խոստանում ենք հիշել մեր Փրկչի քավիչ զոհաբերությունը: Մենք խոստանում ենք լինել Փրկչի պես՝ հնազանդվել Հորը և միշտ պահել Նրա պատվիրանները: Օրհնությունը, որ ի պատասխան ստանում ենք, Նրա Հոգին միշտ մեզ հետ ունենալն է»:[2]

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս՝ Տասներկու Առաքյալների Քվորումից:

«Ես մի ութամյա աղջնակի հետ էի նրա մկրտության օրը: Օրվա վերջում նա ինքնավստահ ասաց. «Ես մի ամբողջ օր մկրտված եմ, և ոչ մի մեղք չեմ գործել»: Սակայն նրա կատարյալ օրը հարատև չէր, և ես վստահ եմ, որ նա մինչ օրս էլ սովորում է, ինչպես բոլորս ենք սովորում, որ որքան էլ ջանասիրաբար փորձենք, մենք միշտ չէ, որ կարողանում ենք խույս տալ վատ իրավիճակներից և սխալ ընտրություններից: . . .

. . . Անհնար է ինքնուրույն լիովին վերափոխվել: Մեր կամքի ուժն ու մեր լավ նպատակները բավարար չեն: Երբ սխալներ ենք գործում կամ սխալ ընտրություններ ենք կատարում, մենք պետք է մեր Փրկչի օգնությունը

Օգնություն Այցելող Ուսուցիչներին

Երբ դուք այցելում եք որևէ քրոջ և նրա ընտանիքին, փորձեք ինչ-որ կերպ օգնել նրան հաղորդության միջոցով նորոգել իր ուխտերը: Եթե նա չի հաճախում հաղորդության ժողովին, կարոնեք հրավիրել նրան հաճախել կամ ձեր օգնությունն առաջարկել (տրանսպորտի, երեխաներին պահելու հարցում, ընկերոջը խնդրել նստել նրանց կողքին և այլն):

Անձնական պատրաստվածություն

Ղուկաս ԻԲ.19-20
Ա Կորնթացիս ԺԱ.23-28
3 Նեփի 18.1–12

ստանանք ճիշտ ուղու վրա վերադառնալու համար: Ամեն շաբաթ հաղորդություն ընդունելով մենք ցույց ենք տալիս մեր հավատը մեզ վերափոխելու Նրա զորության հանդեպ: Մենք խոստովանում ենք մեր մեղքերը և խոստանում թողնել դրանք»:[3]

Ջուլի Բ. Բեք, Սփոփող Միության գերագույն նախագահ:

Հղումներ

1. Jeffrey R. Holland, "This Do in Remembrance of Me," *Ensign,* Nov. 1995, 67.
2. Robert D. Hales, "The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom," *Liahona,* Jan. 2001, 8.
3. Julie B. Beck, "Remembering, Repenting, and Changing," *Liahona,* May 2007, 110–11.

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA: Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *Visiting Teaching Message, June 2010*-ի թարգմանությունը: Armenian 09366 201